

ՆՇԱՆ ՄՈՒԴԱԴՅԱՆ, Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը, Հայկական ՍՍՌ-ի ԳԱ հրատարակչություն, 1964, 197 էջ, գինը 55 կ.:

«Հովհաննիսյանը, շատ տեսակետներից, հիմնադիրն է հանդիսանում հայ նոր գրականության նորագույն շրջանի. նրա շատ ներկայացուցիչներ հանդիսանում են կամ Հովհաննիսյանի անմիջական աշակերտները կամ կապված են նրա հետ բարեկամական կապերով և չեն խուսափել նրա բարերար ազդեցությունից», — հայ պոեզիայի խոշոր գիտակ Կարենի Բրյուսովի այս բնութագրական խոսքերով է սկսվում գրականագետ-տեքստարան Ն. Մուրադյանի գիրքը, որ նվիրված է մեծ քնարերգու Հովհաննես Հովհաննիսյանի պոետական արվեստի քննությանը:

Բանաստեղծի գրական մուտքը հեղինակը գիտում և քննարկում է հախորդ շրջանի գրական ավանդների և նոր ժամանակների հասարակական-քաղաքական ու սոցիալ-հոգեբանական տեղաշարժերի հետ սերտ առնչակցության մեջ: Ծիշտ է նկատում նա, որ մոլորություն կլինեիր, եթե մեր պոեզիայի պատմության մեջ Հովհաննիսյանի մասին խոսելիս աչքաթող արվիր այն անխզելի կապը, որ կա նրա և հախորդ ունեղի ականավոր ներկայացուցիչների միջև: Նրա լիրիկական պոեզիան օրգանական շարունակություն էր այն պոեզիայի, որի ներկայացուցիչներն էին Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Ս. Շահազիզը, միայն թե՛ հասարակական նոր պայմաններում, գեղարվեստական նոր միջոցներով: Այս հարցերին էլ հանգամանորեն անգրադառնում է հեղինակը իր ուսումնասիրության «Մուտք», «Բանաստեղծ քաղաքացին», «Ժողովրդական մոտիվներ», «Բալլադներ և պոեմներ» բաժիններում:

Հովհ. Հովհաննիսյանի գրական ուսումնառության խնդիրը քննելիս Ն. Մուրադյանը թեև համառոտակի, բայց խտացված կերպով բնութագրում է նրա ականավոր նախորդների պոեզիայի մի շարք էական կողմերը, նշում նրանցից յուրաքանչյուրի այն մեծ ծառայությունը, որ մատուցեցին հայրենի մշակույթին, մեր գրականությանը՝ նրա զարգացման որոշակի փուլում: Այսպիսով, ընթերցողին հնարավորություն է տրվում հետևելու բանաստեղծի անգրադառն գրական քայլերին՝ աչքի առաջ ունենալով անց-

յալ դարի 60—70-ական թվականների հայ պոեզիայի ընդհանուր վիճակը, նրա զարգացման տեղեկները, ինչպես և հասարակական կյանքի նոր պայանները:

Գրքում համոզիչ կերպով տրված է բանաստեղծի հասունացման պրոցեսը՝ վաղ շրջանում գրված և այժմ արխիվում պահվող նրա մի շարք չափածո գործերի վերլուծության միջոցով. ստեղծագործաբար յուրացնելով իր դրական ուսուցիչների առաջավոր գեղագիտական ավանդները, Հովհաննիսյանը գտնում է իր թեմաներն ու ոճը և շուտով ինքն է իր հերթին գտնում ուսուցիչ գրական նոր սերունդների համար:

Ըր ուսումնասիրության մեջ Ն. Մուրադյանը հատուկ քննության է առնում Հովհ. Հովհաննիսյանի քաղաքական լիրիկան, հայրենասիրական, բնության և սիրո երգերը, ինչպես նաև նրա երգած սոցիալական, խոհական-փիլիսոփայական մոտիվները: Այստեղ ևս հեղինակն յնում է մի շարք ուշագրավ գիտողություններ, կատարում առանձին գործերի հետաքրքիր վերլուծություններ, հանգում էիշտ հզորակացությունների: Ուզում ենք մասնավորապես նշել «Տեսնել ես արդյոք այն բլուրները» հայտնի բանաստեղծության և Հովհ. Թումանյանի «Քաղաք»-ի առթիվ գրված էջերը: Այստեղ առաջին անգամ ընթերցողի ուշագրության է հանձնվում Հովհ. Հովհաննիսյանի մինչև այժմ անտիպ մի բանաստեղծությունը («Հավատացե՛ք, գուր Հայաստան...»): որը, գրված լինելով «Տեսնել ես արդյոք այն բլուրները» ոտանավորից ընդամենը երկու տարի հետո, փաստորեն ժխտում է վերջինիս մեջ այնքան ընդգրծված կերպով արտահայտություն գտած ողբանդանական ոգևորությունը: Դա, այսպես ասած, յուրովի մի ինքնապարզիա էր, որը, ինչպես համեմատության միջոցով ցույց է տալիս հեղինակը, ըստ էության համընկնում է Հովհ. Թումանյանի՝ տասնամյակներ հետո գրածի ոգուն:

Բանաստեղծի հայրենասիրական երգերը արժեքավորելիս ևս Ն. Մուրադյանը ձգտում է ցույց տալ հասարակական-քաղաքական շար-

ժառիթներով պայմանավորված և զեղազիտական նոր սկզբունքներից բխող այն տարրերութիւնները, որ առկա էին նրա քնարերգութեան մեջ՝ նախորդ շրջանի ականավոր պոետական հեմքերի ստեղծագործութեան համեմատութեամբ: Այս տեսանկյունից էլ նա անդրադառնում է բանաստեղծի երգած սոցիալական մոտիվներին:

Մի դիտողութիւն ունենք վերոհիշյալ խնդիրների արծարծման առնչութեամբ. բանն այն է, որ հեղինակը, երբեմն չափազանց հրապուրվելով Հովհ. Հովհաննիսյանի գրական վաստակի ընդհանուր ընդթափմամբ, տեղ-տեղ շեղվում է իր առջև դրված հիմնական նպատակից: Եվ այդ է պատճառը, որ նման դեպքերում նրա բուն շարադրանքը ըստ էութեան չի համապատասխանում այն ընդհանուր ելակետին, որ նախընտրել է ինքը այս գիրքը գրելիս տալով նրան «Հովհաննէս Հովհաննիսյանի արվեստը» խորագիրը: Իհարկէ, անհեթեթ բան կլինէր որեւէ գրողի արվեստի, գրական վարպետութեան քնննութիւնը և ամբողջական դիմանկարից. խոսքն այստեղ այն մասին է, որ անտես շահնվեր այդ տիպի հետադոտութեան յուրահատուկ բնույթը, որ, ասենք, Հովհ. Հովհաննիսյանի սիրտ կամ բնութեան երգերը վերլուծելիս հեղինակը շեշտեր, առանձնացներ այն նորը, յուրահատուկը, որ բերում է բանաստեղծը նաեւ արվեստի, ունի, գրական վարպետութեան առումով: Այսպիսի մոտեցում նա, իհարկէ, ցուցարարում է, բայց միշտ չէ, երբ հասնում է սպասված արդյունքի:

Այս դժվարութիւնը, շարադրանքի և ելակետի միջև նկատվող որոշ խզումը հաղթահարված, վերացված է արդեն գրքի հաջորդ գլխում, ուր քննութեան են առնվում բանաստեղծի երգած ժողովրդական մոտիվները: Ծիշտ է վարվել հեղինակը անհրաժեշտ ուղարկութիւն նվիրելով գրականութեան ժողովրդայնութեան վերաբերյալ Հովհ. Հովհաննիսյանի արտահայտած կարծիքներին, ժողովրդի ստեղծած բանավոր գրական արժեքներին նրա տված գնահատութեանը: «Բն» մի ազգի կյանքը, անցյալն ու ներկան, և թե՛ նրա գրականութիւնն ու լեզուն ուսումնասիրելու համար,—գրել է ժողովրդական մեծ բանաստեղծը,—անհրաժեշտ է... ուղարկութիւն դարձնել ժողովրդի բերանում կենդանի մնացած այն անպաճույճ բանավոր ավանդութիւնների վրա, որին սովորաբար ժողովրդական գրականութիւնն անուանել տալիս: Ելակետ ունենալով ժողովրդական երգի, խաղիկների էական առանձնահատկութիւնները թե՛ ձևի և թե՛ բովանդակութեան առումով, հեղինակն ըստ այդմ էլ վերլուծում

է բանաստեղծի գրական մեծ վաստակը պոեզիայի այս մարզում: Ուշագրավ է Հովհ. Հովհաննիսյանի ստեղծագործութեան մեջ այնքան կարևոր տեղ ունեցող ժողովրդական մոտիվները ըստ մշակման սկզբունքի խմբավորելու այն փորձը, որ կատարում է հեղինակն իր դրումը: Նա առանձնացնում է երեք խումբ կամ ինչպես ինքն է ասում՝ երեք փուլ. ա) այն բանաստեղծութիւնները, որոնց ձևն է մոտ ժողովրդական խաղիկներին բայց ոչ բովանդակութիւնը, գաղափարը. բ) այն գործերը, որոնց ոգին, գաղափարն է ժողովրդական, բայց ոչ ձևը. գ) այն ստեղծագործութիւնները, որոնք հագվազուտ ներդաշնակութիւն են կազմում ձևի և բովանդակութեան տեսակետից, Այսպիսի խմբավորումը, կարծում ենք, հնարավորութիւն է ընձեռել հեղինակին ավելի շոշափելի, կոնկրետ դարձնելու իր վերլուծութիւնները, տեսնելու և ցույց տալու այն տարրերիչ երանգները, որ կան ժողովրդական մոտիվներով բանաստեղծի գրած երգերում:

Գրական վարպետութեան հետ առնչվող մի քանի խնդիրներ է քննում հեղինակը նաեւ «Բալլադներ և պոեմներ» բաժնում: Նշելով այն տեղը, որ ունեն այս ժանրերը բանաստեղծի ստեղծագործութեան մեջ, նա մի շարք գործերի վերլուծութեան ընթացքում կատարում է որոշ համեմատութիւններ, զուգահեռներ է անցկացնում՝ պարզելու համար այս կամ այն գործը գրելիս բանաստեղծի ստացած գրական մրդումների հարցը, ժողովրդական ավանդութիւնների մշակման նրա սկզբունքը («Լիտաւազգը», «Լահազնի ծնունդը»): Աշխատութեան մեջ առանձին բաժին է նվիրված նաեւ Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծութիւնների տաղաչափութեանը:

Երբի ամենահաջող մասերից է «Ստեղծագրական լարորատորիան» գլուխը: Այստեղ Ն. Մուրադյանին մեծապես օգնել է տասնամյակների աշխատանքով ձեռք բերած նրա տեսատարանական հմտութիւնը: Հովհ. Հովհաննիսյանի արխիւի մանրազնին ուսումնասիրութեան շնորհիւ հեղինակին հաջողվել է բացահայտել մեծ բանաստեղծի անհատականութեան մի շարք էական կողմերը, ամենայն մանրամասնութեամբ լուծարել նրա, այսպես ասած, գրական բնավորութիւնը: Ինչպե՞ս է աշխատել Հովհաննիսյան-ստեղծագործողը, որն է աշխատանքի նրա ոճը, ի՞նչ ազդեցութիւն են ունեցել նրա տրամադրութեան, ստեղծագործական պահների վրա հասարակական պայմանները, շրջապատը, անձնական փոխհարաբերութիւնները և այլն,—այս հարցերին պատասխանելու համար հեղինակը համակողմանի քննութեան է ենթարկել բանաստեղծի ձեռագրերը, համեմա-

տել արխիվում եղած տարբերակները: Նա օգտագործել է նաև առանձին գործերի ստեղծագործական պատմության հետ առնչվող մանրամասները, ժամանակակիցների արժեքավոր վրկայությունները, ինչպես նաև հենց իր՝ քանաստեղծի հաղորդած տեղեկությունները:

«Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը» գիրքն ընդհանուր առմամբ դրված է դիտական պատշաճ մակարդակով, լեզուն սեղմ է ու արտահայտիչ, ոճը՝ հստակ, տեղ-տեղ պատկերավոր: Գրական պրոցեսի քննության ընթացքում, քանաստեղծի ստեղծագործությունն արժեքավորելիս դրսևորվել է հեղինակի գեղագիտական ճաշակը, լրուղիցիան: Երբում կատարված վերլուծությունները մեծ մասամբ կոնկրետ են, եզրակացություններն ու դնահատկանքները քատացել են հստակ, որոշակի արտահայտություն:

Ցավով պետք է նշել, սակայն, որ մի քանի տեղ սպրդել են այնպիսի ձևակերպումներ, որոնք բացահայտորեն ճիշտ չեն, որոնց հետ համաձայնվել չի կարելի: Այսպես, օրինակ, խոսելով «Արագն էկավ» երգի մասին, հեղինակը վերջում գրում է. «Ահա գաղափարի և ձևի

այն երջանիկ միասնությունը, որ հատուկ է միայն ժողովրդական ստեղծագործությանը» (էջ 99): Մի՞թե պարզ չէ, որ նման մոտեցման դեպքում անհնար կլինի ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության մեջ ցույց տալ որևէ կատարյալ գրական երկ, որն ստեղծել է ոչ թե ժողովուրդը, այլ մի անհատ հեղինակ, ասենք Նեքսպիրը կամ Տերյանը: Եվ մի՞թե ապացուցելու հարկ կա, որ ձևի և բովանդակության այն երջանիկ միասնությունը, որի մասին խոսում է մեր հեղինակը, հատուկ է ամեն մի իսկական գեղարվեստական ստեղծագործության, գրական բոլոր հանճարեղ երկերին: Անսպասելի է թվում նաև 131-րդ էջում տեղ գտած այն պնդումը, թե՛ «քնարական մեղմ նկարագրի տեր Հովհաննիսյանին ավելի մոտ էր Պուշկինը, քան Լերմոնտովը»:

Մի փոքր ավելի ուշագիտ լինելու դեպքում հիշտությանը կարելի էր խուսափել նման վրկայումներից: Եվ դրանից միայն կշահեր ամբողջության մեջ հաջողված, շատ կողմերով հետաքրքրական այս ուսումնասիրությունը:

Յ. ԼԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, *Լեզվաբանության պատմություն*, I հատոր, Երևան, 1960, 635 էջ, գինը 2 ռ. 40 կ., II հատոր, Երևան, 1962, 603 էջ, գինը 2 ռ. 11 կ.:

Հրապարակի վրա է պրոֆ. Գ. Բ. Զահուկյանի «Լեզվաբանության պատմություն» ծավալուն աշխատությունը, որի մեջ հանգամանորեն ու ամբողջական ձևով վերլուծության է ենթարկվում լեզվաբանական գիտության անցած ուղին՝ օկզրից մինչև մեր օրերը: Աշխատությունը արժեքավոր ներգրում է լեզվաբանության պատմության և տեսության բնագավառում, ուշագրավ է նոր հարցադրումներով, նյութի բաղմակողմանի ընդգրկմամբ, վերլուծության որոշյն եզանակներով, ինչպես և մեթոդոլոգիական կառ կառուցվածքով:

Ճիշտ է, նշված պարունակին ուշագրություն են դարձրել այլ լեզվաբաններ ևս, օրինակ, կարելի է հիշատակել դանիական գիտնական Տոմսենի հայտնի աշխատությունը: Մակայն հարցերի ընդգրկման, մշակման եզանակով, մեթոդոլոգիական ու մեթոդական առումով այդ աշխատությունը այլևս չի կարող բավարարել մասնականից պահանջները: Վերջին առանումյակում մեզ մոտ և արտասահմանում այս կամ այն չափով անդրադարձել են լեզվաբանության պատմության հարցերին, բայց այդ ուղղու-

թյամբ կատարված աշխատանքները ունեն որվագծային բնույթ՝ հարցերի մասնակի կամ համառոտ ընդգրկումներով: Կան, անկասկած, մենագրական արժեքավոր ուսումնասիրություններ առանձին երկրների լեզվաբանության կամ առանձին լեզվաբանական ուղղությունների պատմության վերաբերյալ: Մակայն համաշխարհային լեզվաբանության պատմություն ուղղությամբ այդ բանը խորությամբ չի արվել:

Գրախոսվող աշխատության ներածության մեջ հեղինակը նախազեա ապիս է համադաստատուն գրականության տեսությունը, ապա անցելում է լեզվաբանության պատմության պարբերացման հարցերին: Այս կապակցությամբ զնահատվում է այն գրականը, ինչ ձևոր է բերվել անցյալում, միաժամանակ նշվում են թերությունները:

Հայտնի է, որ լեզվաբանության պատմությունը սովորաբար բաժանում են «նախագիտական» (մինչև XIX դ.) և «գիտական» (XIX դարը և հետո) շրջանների: Պրոֆ. Զահուկյանը նշում է, որ այս անվանումները անհաղոջ են, թյուրիմացությունների տեղիք են ապիս: